ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

*համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության համար*



INTERNATIONAL ACCOUNTABILITY PROJECT

Այս Հարցաշարի ձևանմուշում դուք կգտնեք հարցերի օրինակներ, որոնք կարող եք ադապտացնել և կիրառել ձեր համայնքում: Դուք կարող եք կիրառել Հարցաշարի ձևանմուշը Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության գործնական ուղեցույցի և Ստուգացանկի հետ միասին:

Ուղեցույց

Ստուգացանկ

Հարցաշարի ձևանմուշ

---

© Հեղինակային և պատճենման իրավունք 2018թ.,
Միջազգային հաշվետվողականության ծրագիր
www.accountabilityproject.org
Դիզայնը և էջադրումը՝ Լետիցիա Ֆարիզատոյի
Նկարազարդումը՝ Հարիս Իչվանի

Այս Հարցաշարի ձևանմուշի նպատակն է ուսումնասիրել համայնքի անդամների ունեցած փորձն ու գիտելիքը զարգացման ծրագրերի գործընթացի և ազդեցության մասին, ինչպես նաև բացահայտել զարգացման մասին նրանց ունեցած գաղափարներն ու առաջնահերթությունները: Դուք կարող եք ադապտացնել և թարգմանել այս ձևանմուշը տարբեր համատեքստերին հարմարեցնելու համար և կիրառել դրա արդյունքները՝ մշակելու համայնքային ջատագովության միջոցառումների և արշավների գործողությունները:

*Հարցաշարի ձևանմուշը* Բաղկացած է հինգ հիմնական բաժնից.

# 1. ՁԵՐ ՄԱՍԻՆ

Այս բաժինը հիմնական տեղեկություններ է հավաքում հարցման ամեն մասնակցի վերաբերյալ: Այս տեղեկությունները կարևոր կլինեն ձեր ստացած պատասխանները վերլուծելիս, որոնք կօգնեն ձեզ հասկանալ հարցվողների կենսագրական տվյալները և համատեքստը և դասակարգել տվյալները ըստ տարիքի, սեռի և համայնքային խմբերի:

# 2. ԻՆՉՊԵ՞Ս Է ԾՐԱԳԻՐՆ ԱԶԴՈՒՄ ՁԵԶ ՎՐԱ

Այս բաժինը ներառում է հարցեր, որոնք կօգնեն ձեզ որոշել հարցման ամեն մասնակցի գիտելիքների մակարդակը ծրագրի մասին, և թե ըստ մասնակիցների որոնք են այս ծրագրի դրական և բացասական ազդեցությունները և ծրագրի հետ կապված որևէ տեղահանման կամ վերաբնակեցման մանրամասները:

### a. Տեղեկություններ ծրագրի մասին

Կարևոր է պարզել, թե արդյոք որևէ տարբերություններ կան առ այն, թե ծրագրում ներգրավված համայնքի բնակիչներն ինչ են մտածում ծրագրի նպատակի մասին և թե ով դրանից օգուտ կքաղի ի համեմատություն նրա, թե ինչ են նրանց ասել ծրագիրը մշակողները: Այս հարցերը նաև կօգնեն ձեզ բացահայտել, թե ինչ գիտեն հարցման մասնակիցները բուն ծրագրի և այն մարդկանց մասին, որոնք ֆինանսավորում և իրականացնում են այն:

### b. Ծրագրի ազդեցությունը

Ծրագիրը կարող է համայնքի անհատ անդամների վրա տարբեր կերպ ազդել: Այս հարցերի նպատակն է բացահայտել ծրագրից բխող օգուտները և բացասական հետևանքները, ներառյալ ապրուստի միջոցների, մշակույթի և ռեսուրսների մատչելիության վրա փոփոխությունը: Դրանք նաև կբացահայտեն, թե արդյոք ազդեցությունը տեղի է ունենում հենց հիմա, արդեն եղել է, թե լինելու է ապագայում:

### c. Տեղահանում և վերաբնակեցում

Համայնքի կամ համայնքի անդամների տեղահանումը իրենց հողերից, և տներից կարող է լինել ծրագրի բազմաթիվ ազդեցություններից մեկը: Նույնիսկ եթե ողջ համայնքը չի ենթարկվում նման ազդեցության, հնարավոր է, որ տեղահանությունը

սպառնում է համայնքի անհատ անդամների: Այս հարցերը կօգնեն ձեզ որոշել տեղահանման և վերաբնակեցման չափը, եթե այն կա, և այն եղանակը, որով այս գործընթացները պլանավորվում և իրականացվում են: Դրանք նաև պետք է խորը պատկերացում տան վերաբնակեցման համապատասխանության և տեղահանվողներին առաջարկվող փոխհատուցման տարբերակների մասին:

## 3. ՁԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐՈՒՄ

Այս բաժինը տեղեկություններ է հավաքում առաջարկվող ծրագրում համայնքի մասնակցության հաճախականության և չափի մասին, որը ձեզ կօգնի գնահատել, թե արդյոք իրազեկման քննարկումները տեղի են ունեցել ժամանակին, և իմաստալից Քննարկումը շատ կարևոր գործընթաց է, որը որոշում է, թե զարգացումը տեղացիների համար ինչքանով է տեղին և իրական: Հասկանալը, թե որտեղ, երբ և ումից են հարցման մասնակիցները ստացել տեղեկություններ ծրագրի մասին կարևոր է որոշելու համար, թե արդյոք ծրագիրը մշակողները համայնքին հնարավորություն տվել են արտահայտել կարծիքներ և, և արդյոք դրանք հաշվի են առնվել ծրագրի մշակման և իրականացման մեջ: Այս բաժնի վերջում տրվող հարցերին համայնքի անդամների կողմից տրված պատասխանները կօգնեն գաղափարներ և առաջարկներ հավաքել հետազոտության որակյալ գործընթացը մշակելու համար:

## 4. ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Այս բաժինը մասնակիցներին հարցնում է ծրագրին ի պատասխան իրենց գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև սեփական համայնքում զարգացման իրենց տեսլականի մասին:

## 5. ՄՆԱՑԵ՛Ք ԿԱՊԻ ՄԵՋ

Հարցման ձևանմուշի վերջին էջը մասնակիցներին առաջարկում է ըստ ցանկության իրենց կոնտակտային տեղեկությունները տրամադրելու տարբերակ՝ հետազոտական թիմին հնարավարություն տալով հետադարձ կապ հաստատել հետազոտության ավարտից հետո: Սակայն, որոշակի իրավիճակներում, այս այս տվյալների թափանցիկությունը կարող է վնասել նրանց, ովքեր մասնակցել են հետազոտությանը: Այս էջն առանձին պահեք հարցման մնացած մասից և պահեք այս փաստաթղթերը ապահով վայրում, որտեղ միայն որոշակի մարդիկ մուտք ունեն:

Հիշեք՝ այս հատվածը կամավոր է, և մասնակցի որոշումը պետք է հարգել: Նայեք Համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության գործնական ուղեցույցը՝ օգնելու մասնակիցներին որոշել անվտանգության և ապահովության հետ կապված խնդիրները:

**Հարցման ձևանմուշի և դրա հարցերի նպատակն է օգնել ձեզ, որպես հետազոտող թիմի, եղած ծրագրի վերաբերյալ տեղեկություններ հավաքել համայնքի մտքերի, կարծիքների և գաղափարների մասին:**

Սակայն այս հարցերին պատասխանելով և հարցման շնորհիվ քննարկումների մեջ մտնելով՝ համայնքը նաև կսովորի տեղեկատվություն ստանալու և ծրագրի մշակմանը և իրականացմանը իմաստալից կերպով մասնակցելու իրենց իրավունքների մասին: Եթե դեռևս չեն արել, ապա համայնքի անդամները պետք է սկսեն միահամուռ և քննադատաբար մտածել, թե արդյոք ծրագիրը նախագծվել է համայնքի կողմից և համայնքի համար, և որոնք են զարգացման իրենց սեփական տեսլականները:

Հետևյալ Հարցման ձևանմուշը պետք է դիտարկել որպես ուղեցույց ձեր հետազոտական թիմի համար, որը կարող է աղապտացնել այն և կիրառել ըստ սեփական համատեքստի:

Կարող է պարզվել, որ հարցաշարում ներառված որոշ հարցեր տարօրինակ են թվում համայնքի անդամներին, քանի որ հնարավոր է, որ նրանց առաջին անգամ են հարցնում կոնկրետ թեմայի մասին: Խորհուրդ է տրվում հարցերը խմբով միասին բարձրաձայն կարդալ: Եթե Հարցման ձևանմուշը մեկ այլ լեզվով է, կարող եք խնդրել համայնքի ներկայացուցիչներին միասին նախապես կարդալ հարցաշարը՝ վստահ լինելու, որ թարգմանությունը հստակ է և հեշտ հասկանալի:

Ընտրեք ձեր պատասխանը:

## Ընտրեք ձեր պատասխանը

Այս հարցերում խնդրում ենք մասնակցին ընտրել մեկ պատասխան, որը լավագույնս ներկայացնում է իրենց իրականությունը: Դրանք սովորաբար այսպիսին են

**Դուք կիրառու՞մ եք այս հարցումը՝ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության իրականացման համար**

- ☐ Այո
- ☐ Ոչ

## Ընտրեք բոլոր ճիշտ պատասխանները

Այս հարցերում խնդրում ենք մասնակցին ընտրել այնքան պատասխան, ինչքան հարկ են համարում՝ ամբողջությամբ պատկերելու իրենց փորձառությունները, մտքերը և գաղափարները որոշակի թեմայի շուրջ: Դրանք սովորաբար այսպիսին են.

**Ո՞րտեղ իմացաք համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության մասին: Ընտրեք բոլոր ճիշտ պատասխանները**

- ☐ Համայնքահեն կազմակերպությունում
- ☐ Համայնքային ժողովում
- ☐ Գրքույկից և այլ տեղեկատվական նյութերից
- ☐ ՄՀԾ կամ այլ կազմակերպության ռեսուրսներից
- ☐ Համայնքային ռադիոյից կամ այլ լրատվամիջոցից

Այս հարցերի դեպքում, ելնելով ձեր գործընթացից, միգուցե հետազոտական թիմի որևէ անդամ նախ բարձրաձայն կարդա միայն հարցը (այլ ոչ պատասխանները)՝ մասնակիցներին ժամանակ տալով մտածել և սեփական պատասխանը տալ: Այնուհետև մասնակիցը կարող է ընտրել լավագույնս համապատասխանող պատասխանները:

Սա **կօգնի հավաստիանալ, որ մասնակիցները սահմանափակված չեն զգում միայն Հարցման ձևանմուշում տրված պատասխանի տարբերակներով և ազատ են տալ իրենց սեփական պատասխանը: Եթե որևէ պնդումներ հնչեն, գրանցեք սրանք նշումների համար տրված հատվածում:**

Երբեմն այս տեսակի հարցերը կարող են նաև ամեն թեմայի համար ունենալ երկու տարբերակ – մեկը անցյալ ժամանակով, մյուսը՝ ապագա, որպեսզի ամեն մասնակից ընտրի այն պատասխանը, որը լավագույն կերպով ներկայացնում է իրենց իրականությունը: Դրանք սովորաբար այսպիսին են․

**Ինչպե՞ս եք կիրառում համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության արդյունքները ձեր համայնքում: Ընտրեք բոլոր ճիշտ պատասխանները**

- ☐ Մենք հաշվետվություն կգրենք ստացված տվյալների շուրջ
- ☐ Մենք հաշվետվություն ենք գրել ստացված տվյալների շուրջ

- ☐ Մենք արվեստի միջոցով կներկայացնենք արդյունքները
- ☐ Մենք արվեստի միջոցով ենք ներկայացրել արդյունքները

- ☐ Մենք արդյունքները կներկայացնենք սոցցանցերում
- ☐ Մենք արդյունքները ներկայացրել ենք սոցցանցերում

- ☐ Մենք միջոցառում կիրականացնենք
- ☐ Մենք միջոցառում ենք իրականացրել

## Երկու քայլանի աղյուսակային հարցեր

Այս հարցերը մի փոքր ավելի բարդ են և մեկ անգամից մի քանի տեսակի տեղեկություններ են հավաքում: Այս հարցերում ամեն սյունյակի վերնագիրը նույն հարցի միայն մեկ մասն է տալիս: Մասնակիցները պետք է առաջին սյունյակը համարեն որպես հիմնական թեմա, իսկ երկրորդ սյունյակը որպես հարցվողի՝ ավելի մանրամասն պատասխան առաջին սյունյակի վերաբերյալ: Դրանք սովորաբար այսպիսին են․

**Ո՞րտեղից դուք իմացաք համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության մասին: Ընտրեք բոլոր ճիշտ պատասխանները.**

| Դուք իմացել եք... | Ո՞րտեղից եք իմացել այդ մասին | | |
|---|---|---|---|
| **ՄՀԾ կամ այլ կազմակերպության ռեսուրսներից** | ☐ Սեմինարից կամ վերապատրաստումից | ☐ Համայնքա-յին ժողովից | ☐ Առցանց |
| **Համայնքի հետազոտական թիմից** | ☐ Սեմինարից կամ վերապատրաստումից | ☐ Համայնքա-յին ժողովից | ☐ Առցանց |

Հետազոտական որոշ գործընթացների համար լավ մոտեցում է սկզբում տալ առաջին սյունյակի հարցը, իսկ հետո հարցնել մանրամասների մասին: Օրինակ՝ վերևի հարցի դեպքում սկզբում կարող եք հարցնել «Դուք իմացել եք համայնքի կողմից առաջնորդվող հետազոտության մասին ՄՀԾ-ի՞, թե այլ կազմակերպության ռեսուրսներից և նյութերից»: Եթե նրանք այո պատասխանեն, այնուհետև կարող եք հարցնել. «Իսկ այս տեղեկության մասին իմացաք վերապատրաստման, սեմինարի կամ համայնքային ժողովի ժամանա՞կ, թե՞ առցանց»:

# Գրավոր պատասխան պահանջող հարցեր

Այս հարցերը մասնակիցներին խնդրում են իրենց պատասխանները գրել տրված քառակուսում՝ զանազան տարբերակներից ընտրելու փոխարեն: Դրանք սովորաբար այսպիսին են.

**Ինչու՞ եք կարծում, որ համայնքի կողմից առաջնորդվող հետազոտությունը ճիշտ տարբերակն է ձեր համայնքի համար: Բացատրե՛ք:**

.............................................................................................................................

Որոշ հարցեր կարող են ավելի շատ տեղեկություններ հայցել, քան վերը նկարագրվածները: Սրանց դեպքում առանձին ցուցումներ, որպեսզի իմանաք նման հարցեր տալու լավագույն եղանակները:

Եթե որևէ հարց չի վերաբերում տվյալ հարցվողին, նրանք չպետք է պատասխանեն դրան: Հիշեք, որ պետք է ձեզ ազատ զգաք ադապտացնել հարցերը՝ ձեր համայնքի իրականությանը համապատասխանեցնելու համար:

**Այժմ դուք պատրաստ եք կիրառել կամ ադապտացնել Հարցման ձևանմուշը՝ համայնքի կողմից առաջնորդվող ձեր սեփական հետազոտությունն իրականացնելու համար:**

# 1

# Ձեր մասին

1. Ձեր համայնքի անունը: ..........................................................

2. Նշեք ձեր սեռը

..........................................................................................

3. Քանի՞ տարեկան եք

- [ ] 1-10
- [ ] 11-19
- [ ] 20-25
- [ ] 26-35
- [ ] 36-45
- [ ] 46-55
- [ ] 56-65
- [ ] 66-75
- [ ] 76-85
- [ ] 85 կամ ավելի մեծ

4. Ինչպե՞ս կնկարագրեք ինքներդ ձեզ: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները

- [ ] Ես պատկանում եմ բնիկ համայնքի
- [ ] Ես կրոնական կամ էթնիկ փոքրամասնության անդամ եմ
- [ ] Ես խտրականության ենթարկվող խմբի կամ խավի անդամ եմ
- [ ] Ես ներգաղթյալ եմ
- [ ] Ես փախստական եմ
- [ ] Ես գրանցված բնակիչ եմ

- ☐ Ես միգրանտ եմ այլ երկրից
- ☐ Ես միգրանտ եմ այլ մարզից, նահանգից կամ քաղաքից
- ☐ Ես այն երկրի քաղաքացի եմ, որտեղ ապրում եմ
- ☐ Վերը նշվածներից ոչ մեկը

**5. Ի՞նչ է ձեր բնիկ, էթնիկ, կրոնական, փոքրամասնության կամ խտրականության ենթարկվող խմբի անունը:**

..........................................................................................................

..........................................................................................................

# 2

# Ինչպե՞ս է այս ծրագիրն ազդում ձեզ վրա

## Տեղեկություններ ծրագրի մասին

**6. Ծրագրի անվանումը:** ..........................................................................

**7. Դուք գիտե՞ք, թե ով է ֆինանսավորում ծրագիրը:**

- ☐ Այո
- ☐ Ոչ

**8. Եթե այո, ո՞վ է ներգրավված ծրագրի ֆինանսավորման մեջ: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները:**

- ☐ Կառավարությունը
- ☐ Մի ընկերություն
- ☐ Մի միջազգային բանկ
- ☐ Մի ազգային բանկ
- ☐ Այլ

Եթե գիտեք վերը նշվածներից որևէ մեկի անունը, նշեք այստեղ․

.......................................................................................................................

.......................................................................................................................

**9. Գիտե՞ք, թե ով է իրականացնում ծրագիրը**

- ☐ Այո
- ☐ Ոչ

**10. Եթե այո, ո՞վ է ներգրավված ծրագրի իրականացման մեջ: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները**

- ☐ Կառավարությունը
- ☐ Մի ընկերություն
- ☐ Մի միջազգային բանկ
- ☐ Մի ազգային բանկ
- ☐ Այլ

Եթե գիտեք վերը նշվածներից որևէ մեկի անունը, նշեք այստեղ․

.......................................................................................................................

.......................................................................................................................

.......................................................................................................................

## 11. Ի՞նչ գիտեք ծրագրում ներգրավվածների և նրանց կիրառած գործընթացների մասին

| Գիտե՞ք... | |
|---|---|
| **Ներգրավված մարդկանց կամ կազմակերպությունների անունները** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |
| **Ներգրավված մարդկանց կամ կազմակերպությունների պատմությունն ու առաքելությունը** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |
| **Ունե՞ք ներգրավված մարդկանց կամ կազմակերպությունների գրասենյակների կամ կոնտակտային տեղեկություններ** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |
| **Խորհրդակցության գործընթա՞ց** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |
| **Բողոքների գործընթա՞ց** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |
| **Փոխհատուցման գործընթա՞ց** | |
| ☐ Ես երբեք չեմ տեղեկացվել այդ մասին | ☐ Ես տեղեկացվել եմ այդ մասին |

Նշումներ.

.........................................................................................................................................

.........................................................................................................................................

**12. Ըստ ծրագիրը մշակողների կամ կառավարության պաշտոնյաների, ո՞րն է ծրագրի նպատակը: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

ճիշտ պատասխանները.

- [ ] Սնունդ
- [ ] Կրթություն
- [ ] Հիմնական սոցիալական ծառայություններ
- [ ] Առողջապահություն
- [ ] Մաքուր ջուր
- [ ] Էլեկտրաէներգիա
- [ ] Մաքուր էներգիա

Բարելավել...

- [ ] Դպրոցները
- [ ] Աշխատատեղերը և եկամուտը
- [ ] Հանրային տրանսպորտը
- [ ] Ճանապարհները
- [ ] Գյուղատնտեսական ծրագրերը հողագործությամբ զբաղվող համայնքների համար
- [ ] Հողի տիրապետման ապահովությունը
- [ ] Սանիտարական պայմանները
- [ ] Գենդերային հավասարությունը և կանանց իրավունքները

Զարգացնել...

- [ ] Մեր երկրի բնական ռեսուրսները
- [ ] Մեր երկրի տնտեսական աճը
- [ ] Զբոսաշրջությունը
- [ ] Արտահանումն ու առևտուրը
- [ ] Օտարերկրյա ներդրումները մեր երկրում
- [ ] Ավելի շատ նոր շենքեր՝ մեր քաղաքին ավելի ժամանակակից տեսք տալու համար

Եվ...

- ☐ Հարգել, պաշտպանել և խթանել մարդու իրավունքները
- ☐ Նպաստել ավելի մաքուր, առողջ միջավայրին
- ☐ Նվազեցնել անհավասարությունը հարուստների և աղքատների միջև
- ☐ Այլ (բացատրեք)

Նշումներ.

..........................................................................................................................................

..........................................................................................................................................

**13. Ըստ ծրագիրը մշակողների կամ կառավարության պաշտոնյաների, ո՞վ օգուտ կքաղի այս ծրագրից: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Մեր համայնքը
- ☐ Մեր տարածաշրջանում կամ երկրում ամենաշատ քաղաքական կամ տնտեսական իշխանություն ունեցողները
- ☐ Ողջ երկրի ժողովուրդը
- ☐ Հարևան երկրները
- ☐ Կառավարության պաշտոնյաները
- ☐ Այս ծրագրում ներդրում անողները
- ☐ Մասնավոր ընկերությունները
- ☐ Այլ (բացատրեք)

Նշումներ.

..........................................................................................................................................

..........................................................................................................................................

..........................................................................................................................................

..........................................................................................................................................

**14. Ըստ ձեզ, ո՞վ օգուտ կքաղի այս ծրագրից (սա կարող է տարբերվել ծրագիրը մշակողների ասածից ։ Նշեք բոլոր ճիշտ պատասխանները) ․**

- ☐ Մեր համայնքը
- ☐ Մեր տարածաշրջանում կամ երկրում ամենաշատ քաղաքական կամ տնտեսական իշխանություն ունեցողները
- ☐ Ողջ երկրի ժողովուրդը
- ☐ Հարևան երկրները
- ☐ Կառավարության պաշտոնյաները
- ☐ Այս ծրագրում ներդրում անողները
- ☐ Մասնավոր ընկերությունները
- ☐ Այլ (բացատրեք)

Նշումներ ․

..............................................................................................................................

## Ծրագրի ազդեցությունը

**15. Եթե ծրագիրը մշակողները կամ կառավարությունը որոշակի օգուտներ են խոստացել, որո՞նք են այս խոստումները։ Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ տուն կունենանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքը մեր հողին տիրելու օրինական իրավունք կստանանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ աշխատանք կունենանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի շատ եկամուտ կվաստակենք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի արագ կհասնենք աշխատանքի
- ☐ Հանրային տրանսպորտի ծառայությունները մեր համայնքում կամ տարածաշրջանում կբարելավվեն
- ☐ Ճանապարհները մեր համայնքում կամ տարածաշրջանում կբարելավվեն

- ☐ Ինձ կամ իմ ընտանիքին ավելի կայուն էլեկտրաէներգիա հասանելի կլինի
- ☐ Ինձ կամ իմ ընտանիքնին ավելի հասանելի կլինեն առողջապահությունը և ավելի լավ առողջապահական ծառայությունները
- ☐ Ինձ կամ իմ ընտանիքին ավելի հասանելի կլինի բավարար քանակի առողջ սնունդ
- ☐ Իմ առողջությունը կբարելավվի
- ☐ Լավ որակի կրթությունն ավելի հասանելի կլինի իմ երեխաների համար
- ☐ Անվտանգ, մաքուր ջուրն ավելի հասանելի կլինի իմ կամ իմ ընտանիքի համար
- ☐ Որևէ օգուտ չեմ սպասում
- ☐ Այլ (նկարագրեք)

Նշումներ.

......................................................................................................................................

......................................................................................................................................

**16. Ըստ ձեզ՝ դուք օգուտ ստանու՞մ եք այս ծրագրից: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ տուն կունենանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ տուն ունենք
- ☐ Ես կամ իմ ընտանիքը մեր հողին տիրելու օրինական իրավունք կստանանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքը մեր հողին տիրելու օրինական իրավունք ունենք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ աշխատանք կունենանք
- ☐ Ես կամ իմ ընտանիքն ավելի լավ աշխատանք ունենք

- [ ] Ես կամ իմ ընտանիքն ավելի շատ եկամուտ կվաստակենք
- [ ] Ես կամ իմ ընտանիքն ավելի շատ եկամուտ ենք վաստակում

- [ ] Ես կամ իմ ընտանիքն ավելի արագ կհասնենք աշխատանքի
- [ ] Ես կամ իմ ընտանիքն ավելի արագ ենք հասնում աշխատանքի

- [ ] Հանրային տրանսպորտի ծառայությունները մեր համայնքում կամ տարածաշրջանում կբարելավվեն
- [ ] Հանրային տրանսպորտի ծառայությունները մեր համայնքում կամ տարածաշրջանում բարելավվել են

- [ ] Ճանապարհները մեր համայնքում կամ տարածաշրջանում կբարելավվեն
- [ ] Ճանապարհները մեր համայնքում կամ տարածաշրջանում բարելավվել են

- [ ] Ինձ ավելի կայուն էլեկտրաէներգիա հասանելի կլինի
- [ ] Ինձ հասանելի է ավելի կայուն էլեկտրաէներգիա

- [ ] Ինձ կամ իմ ընտանիքնին ավելի հասանելի կլինեն առողջապահությունը և ավելի լավ առողջապահական ծառայությունները
- [ ] Ինձ կամ իմ ընտանիքնին ավելի հասանելի են առողջապահությունը և ավելի լավ առողջապահական ծառայությունները

- [ ] Ինձ կամ իմ ընտանիքին ավելի հասանելի կլինի բավարար քանակի առողջ սնունդ
- [ ] Ինձ կամ իմ ընտանիքին ավելի հասանելի է բավարար քանակի առողջ սնունդ

- [ ] Իմ առողջությունը կբարելավվի
- [ ] Իմ առողջությունը բարելավվել է

- [ ] Լավ որակի կրթությունն ավելի հասանելի կլինի իմ երեխաներին
- [ ] Լավ որակի կրթությունն ավելի հասանելի է իմ երեխաներին

- [ ] Անվտանգ, մաքուր ջուրն ավելի հասանելի կլինի ինձ կամ իմ ընտանիքին
- [ ] Անվտանգ, մաքուր ջուրն ավելի հասանելի կլինի ինձմ կամ իմ ընտանիքին
- [ ] Անվտանգ, մաքուր ջուրն ավելի հասանելի է ինձ կամ իմ ընտանիքին

- [ ] Ես օգուտ չեմ ստանա այս ծրագրից
- [ ] Ես օգուտ չեմ ստացել այս ծրագրից

- [ ] Այլ (նկարագրեք)

Նշումներ․

.....................................................................................................................................

.....................................................................................................................................

**17. Ձեզ վրա այս ծրագիրը բացասաբա՞ր է ազդում: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- [ ] Կկորցնեմ աշխատանքս
- [ ] Կորցրել եմ աշխատանքս

- [ ] Ես կամ իմ ընտանիքը պարտքի տակ կընկնենք
- [ ] Ես կամ իմ ընտանիքը ներկայումս պարտք ունենք

- [ ] Իմ ընտանիքը մասերի կբաժանվի
- [ ] Իմ ընտանիքը մասերի է բաժանվել

- [ ] Երեխաներս ստիպված կլինեն դպրոցից դուրս մնալ
- [ ] Երեխաներս ստիպված դպրոցից դուրս են մնացել

- [ ] Տունս կկորցնեմ
- [ ] Տունս կորցրել եմ

- ☐ Անվտանգ խմելու ջուրը և սանհանգույցն այլևս հասանելի չեն լինի ինձ կամ իմ ընտանիքին
- ☐ Անվտանգ խմելու ջուրը և սանհանգույցն այլևս հասանելի չեն ինձ կամ իմ ընտանիքին

---

- ☐ Էլեկտրաէներգիան հասանելի չի լինի ինձ կամ ընտանիքին
- ☐ Էլեկտրաէներգիան այլևս հասանելի չի ինձ կամ ընտանիքին

---

- ☐ Կկորցնեմ հողը, որի վրա իրավունքներ ունեմ
- ☐ Կորցրել եմ հողը, որի վրա իրավունքներ ունեի

---

- ☐ Կկորցնեմ հողը, որը ես մշակում եմ
- ☐ Կորցրել եմ հողը, որը ես մշակում էի

---

- ☐ Անտառը, արոտավայրերը, գետը կամ այլ հանրային վայրեր, որի շնորհիվ ապրուստ եմ վաստակում, այլևս անհասանելի կլինեն ինձ համար
- ☐ Անտառը, արոտավայրերը, գետը կամ այլ հանրային վայրեր, որի շնորհիվ ապրուստ էի վաստակում, այլևս անհասանելի են դարձել ինձ համար

---

- ☐ Կկորցնեմ ընտանի կենդանիներիս, անասուններիս, կամ ձկան պաշարները
- ☐ Կորցրել եմ ընտանի կենդանիներիս, անասուններիս, կամ ձկան պաշարները

---

- ☐ Միջավայրս կավիրվի
- ☐ Միջավայրս ավիրվել է

---

- ☐ Իմ սրբավայրերը կավիրվեն
- ☐ Իմ սրբավայրերն ավիրվել են

---

- ☐ Ինձ վրա վատ ազդեցություն չի ունենա
- ☐ Ինձ վրա վատ ազդեցություն չի ունեցել

---

**18. Եթե ծրագիրը ձեր վրա արդեն իսկ որոշ բացասական ազդեցություն է ունեցել, ի՞նչ եք դուք նկատել: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Ես և իմ ընտանիքը հիվանդացել ենք կամ մեր առողջությունը վատացել է
- ☐ Ես և իմ ընտանիքը ավելի շատ սթրես և անհանգստություն ունենք, քան նախկինում, կամ էլ մեր հոգեկան առողջությունն է վատացել
- ☐ Նկատել եմ ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի աճ
- ☐ Նկատել եմ կոռուպցիայի աճ
- ☐ Նկատել եմ ընտանեկան կամ սեռական բռնության աճ
- ☐ Նկատել եմ հարբեցողության և թմրամոլության աճ
- ☐ Նկատել եմ ավելի շատ սթրես և վեճ ընտանեկան հարաբերություններում
- ☐ Ծրագրի ազդեցությունից հետո որևէ փոփոխություն չեմ նկատել
- ☐ Այլ (բացատրեք)

Նշումներ.

..........................................................................................................................

..........................................................................................................................

**19. Ձեր կյանքի ընդհանուր որակը կփոխվի՞, կամ արդեն փոխվե՞լ է ծրագրի արդյունքում:**

- ☐ Իմ կյանքի որակը բարելավվել է
- ☐ Կարծում եմ՝ Իմ կյանքի որակը կբարելավվի
- ☐ Իմ կյանքի որակն ավելի վատացել է
- ☐ Վստահ եմ՝ իմ կյանքի որակն ավելի կվատանա
- ☐ Իմ կյանքի որակում փոփոխություն չկա

- [ ] Վստահ եմ՝ իմ կյանքի որակի հարցում փոփոխություն չի լինի
- [ ] Այլ (նկարագրեք)

Նշումներ․

.......................................................................................................................

.......................................................................................................................

.......................................................................................................................

## Տեղահանում և վերաբնակեցում

**20. Այս ծրագրի պատճառով ձեզ ֆիզիկապես կամ տնտեսապես տեղահանում կամ վերաբնակեցնու՞մ են**

- [ ] Այո
- [ ] Դեռ ոչ, բայց շուտով այն կազդի մեզ վրա
- [ ] Ոչ, այս ծրագրի պատճառով ես չեմ տեղահանվում կամ վերաբնակեցվում
- [ ] Այլ (նկարագրեք)

Նշումներ․

.......................................................................................................................

**21. Եթե ծրագիրը ձեզ սպառնում է ֆիզիկական կամ տնտեսական տեղահանմամբ, ինչպե՞ս կնկարագրեք դա:**

- [ ] Ծրագրի պատճառով անհնար կլինի մնալ իմ ներկայիս տանը, այնպես որ պիտի տեղափոխվեմ
- [ ] Ես կամ իմ ապրուստի միջոցները ենթակա են տեղափոխման որպես վերաբնակեցման ծրագրի մաս
- [ ] Ծրագրի պատճառով անհնար է դառնում իմ ապրուստի միջոցների կամ եկամտի աղբյուրի շարունակականությունը

☐ Այս ծրագիրն ինձ չի սպառնում ֆիզիկական կամ տնտեսական տեղահանմամբ

☐ Այլ (նկարագրեք)

Նշումներ.

.......................................................................................................................................................

**22. Դուք կամ ձեր ընտանիքը նախկինում որևէ ծրագրի կողմից տեղահանվե՞լ եք**

☐ Ոչ, նախկինում չեմ տեղահանվել

☐ Ես նախկինում չեմ տեղահանվել, սակայն իմ ծնողները կամ նրանց ծնողներն են տեղահանվել

☐ Ես նախկինում մեկ անգամ տեղահանվել եմ

☐ Ես նախկինում ավելի, քան մեկ անգամ տեղահանվել եմ

Բացատրեք.

.......................................................................................................................................................

**23. Եթե ձեզ տեղահանում են, ծրագիրը մշակողները կամ կառավարության պաշտոնյաները ձեզ հնարավորություն կտա՞ն օգտվել ծրագրերից, որոնք կբարելավեն ձեր ապրուստի միջոցները և կմեծացնեն ձեր եկամուտը: Եթե այո, ի՞նչ տեսակի ծրագրեր են: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

☐ Վարկերի հասանելիություն

☐ Մասնագիտական վերապատրաստում

☐ Աշխատանք ծրագրում

☐ Այլ

☐ Ոչ մի բան

Եթե այլ կերպ, ապա բացատրեք.

.......................................................................................................................................................

**24.** **Դուք կամ ձեր համայնքը մասնակցե՞լ եք ծրագրի ֆինանսավորողների կամ իրականացնողների կողմից ձեր տների, հողի և ռեսուրսների, որոնք պիտի ավիրվեն կամ կորչեն, արժեքների որոշման և փաստագրման որևէ գործողության:**

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Չգիտեմ

Խնդրում ենք նկարագրել այս գործողությունները, ինչպես են նրանք սկսվել և ինչպես եք մասնակցել:

..........................................................................................................................................

**25.** **Ինչպե՞ս կնկարագրեք այն տարածքը, որտեղ ապրում եք հիմա:**

- ☐ Քաղաքային
- ☐ Գյուղական
- ☐ Այլ

Նշումներ.

..........................................................................................................................................

**26.** **Եթե ձեզ տեղահանում են, ինչպե՞ս կնկարագրեք այն տարածքը, որտեղ պետք է վերաբնակեցվեք:**

- ☐ Քաղաքային
- ☐ Գյուղական
- ☐ Այլ
- ☐ Ես չեմ վերաբնակեցվում

Նշումներ.

..........................................................................................................................................

**27. Եթե ձեզ վերաբնակեցնում են, ինչպես կնկարագրեք ձեր նոր բնակարանային պայմանները Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Իմ նոր տան տեղն անհարմար է
- ☐ Իմ նոր տան տեղը հարմար է

---

- ☐ Նոր տունն այնպես է նախագծված, որ չի համապատասխանում մեր ավանդույթներին և մշակույթին
- ☐ Նոր տունն այնպես է նախագծված, որ համապատասխանում է մեր ավանդույթներին և մշակույթին

---

- ☐ Նոր վայրում ես չափից դուրս շատ պիտի վճարեմ տան համար
- ☐ Ես գոհ եմ նրանից, թե ինչքան պիտի վճարեմ նոր վայրում իմ տան համար

---

- ☐ Իմ նոր տունը բավարար տարածք կամ առանձնություն չի ապահովում ընտանիքիս համար
- ☐ Իմ նոր տունն ապահովում է բավարար տարածք կամ առանձնություն ընտանիքիս համար

---

- ☐ Ավելի հեռու պիտի ճամփորդեմ աշխատանքի հասնելու համար, կամ ավելի երկար երթևեկեմ
- ☐ Տարածությունը, որ պիտի անցնեմ աշխատանքի հասնելու համար և երթևեկության վրա ծախսվող ժամանակն ընդունելի են

---

- ☐ Ավելի շատ եմ վճարում տրանսպորտի համար
- ☐ Նույն գումարն եմ վճարում տրանսպորտի համար կամ ավելի քիչ

---

- ☐ Իմ նոր տան մոտ մաքուր և ապահով խմելու ջուրը հասանելի չէ
- ☐ Մաքուր և ապահով խմելու ջուրը հասանելի է իմ նոր տան մոտ

---

- ☐ Իմ նոր տան մոտ դպրոց չկա, ուր իմ երեխաները կարող են հաճախել
- ☐ Իմ նոր տան մոտ դպրոց կա, ուր իմ երեխաները կարող են հաճախել

- ☐ Իմ նոր տան մոտակայքում չկան անհրաժեշտ ծառայություններ, օրինակ՝ հանրային պոլիկլինիկաներ
- ☐ Իմ նոր տան մոտակայքում կան անհրաժեշտ ծառայություններ, օրինակ՝ հանրային պոլիկլինիկաներ

**28. Եթե ձեզ տեղահանություն է սպառնում, ի՞նչն է ստիպում ձեզ տեղափոխվել: Նշեք բոլոր ճիշտ պատասխանները.**

- ☐ Նրանք մեզ կսպառնան ուժի և բռնության գործադրմամբ, որ վախենանք և տեղափոխվենք
- ☐ Նրանք սպառնում էին մեզ ուժի և բռնության գործադրմամբ, որ վախենանք և տեղափոխվենք

- ☐ Նրանք ֆիզիկական բռնություն կկիրառեն ինձ կամ իմ համայնքում այլ մարդկանց վնասելու համար, որ ստիպված տեղափոխենք
- ☐ Նրանք ֆիզիկական բռնություն են կիրառել ինձ կամ իմ համայնքում այլ մարդկանց վնասելու համար, որ մենք ստիպված տեղափոխենք

- ☐ Իմ ապրուստի միջոցները կոչնչանան: Մենք ստիպված կլինենք տեղափոխվել, քանի որ այլ տարբերակ չունենք
- ☐ Իմ ապրուստի միջոցները ոչնչացվեցին: Մենք ստիպված տեղափոխվեցինք, քանի որ այլ տարբերակ չունեինք

- ☐ Մենք կկորցնենք խմելու ջրի և էլեկտրաէներգիայի հասանելիությունը: Մենք ստիպված կլինենք տեղափոխվել, քանի որ այլ տարբերակ չունենք
- ☐ Մենք կորցրեցինք խմելու ջրի և էլեկտրաէներգիայի հասանելիությունը: Մենք ստիպված տեղափոխվեցինք, քանի որ այլ տարբերակ չունեինք

- [ ] Նրանք ահաբեկման և հարկադրանքի միջոցներ կկիրառեն, օրինակ՝ կասեն, որ փոխհատուցում չենք ստանա, կկորցնենք մեր աշխատանքը կամ նման մի հետևանքի առաջ կկանգնենք
- [ ] Նրանք ահաբեկման և հարկադրանքի միջոցներ կիրառեցին, օրինակ՝ ասացին, որ փոխհատուցում չենք ստանա, կկորցնենք մեր աշխատանքը կամ նման մի հետևանքի առաջ կկանգնենք

---

- [ ] Մեր ապրելու պայմանները շատ անառողջ կդառնան ծրագրի ազդեցության շնորհիվ, այնպես որ ստիպված կլինենք տեղափոխվել
- [ ] Մեր ապրելու պայմանները շատ անառողջ դարձան ծրագրի ազդեցության շնորհիվ, այնպես որ ստիպված էինք տեղափոխվել

---

- [ ] Նրանք կկիրառեն միջոցառումներ, կիրականացնեն պայթեցումներ, դիտավորյալ ջրհեղեղ կամ այլ միջոցներ, որ վախենանք և տեղափոխվենք
- [ ] Նրանք կիրառեցին միջոցառումներ, իրականացրեցին պայթեցումներ, դիտավորյալ ջրհեղեղ կամ այլ միջոցներ, որ վախենանք և տեղափոխվենք

---

- [ ] Չկա ֆիզիկական բռնություն կամ դրա սպառնալիք: Մենք կամովին ենք ընդունում փոխհատուցումը և վերաբնակեցման տարբերակները
- [ ] Չկար ֆիզիկական բռնություն կամ դրա սպառնալիք: Մենք կամովին ընդունեցինք փոխհատուցումը և վերաբնակեցման տարբերակները

---

**29. Խնդրում ենք նկարագրել ձեր փորձառությունները: Կարևոր է այս թեմայի շուրջ հավաքել մեջբերումներ և օրինակներ, այնպես որ խնդրում ենք ժամանակ հատկացնել ձեր տեղահանման փորձի մասին գրելու համար:**

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

................................................................................................................................

**30. Եթե ձեզ տեղահանություն է սպառնում, ի՞նչ կարգավիճակով եք տիրապետում ձեր հողին և տանը:**

- ☐ Ես իմ հողի սեփականատերն եմ և ունեմ այն տնօրինելու իրավունք
- ☐ Իմ համայնքն ունի մեր հողերը տնօրինելու իրավունք
- ☐ Ես իրավունք ունեմ տնօրինել այս հողը, բայց դեռ չեմ դիմել պաշտոնական իրավունք ստանալու համար
